*Հավելված N1*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*
*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2017 թվականի հուլիսի 20-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

***Ընթացակարգի ծածկագիրը՝ ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/15-1***

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/15-1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 20.07.2017թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 20.07.2017թ.-ին տրամադրված պարզաբանումները՝

***Հարցադրում N 1:*** Կազմակերպությունը առաջարկում է թիվ 44 չափաբաժնի համար համարժեք ախտահանող միջոց, որի կազմության մեջ մտնող ակտիվ նյութերն են 9,75 տոկոս դիդեցիլդիմեթիլամոնիումի *քլորիդ* և 1 տոկոս պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ: Նյութը պարունակում է նաև մակերեսային ակտիվ նյութ (ՄԱՆ), կոռոզիայի ինհիբիտոր: Նյութի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH) 6,3-7,7 է:
Իսկ հրավերում 44-րդ չափաբաժնի համար պահանջվում է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Բաղադրությունը - դիդեցիլդիմեթիլամոնիումի *կարբոնատ*-9.75 տոկոս, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ (20 տոկոս լուծույթի 4,8 տոկոս), ինչպես նաև գործառնական բաղադրիչներ, կոռոզիայի ինհիբիտոր և այլ հավելյալ նյութեր: Ախտահանիչ նյութի pH–ը 6,3 - 7,7:
Ըստ մասնակցի ֆրանսիական ընկերության կայքի պաշտոնական փաստաթղթային տվյալների և ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգի, ախտահանիչ միջոցը չունի հրավերով նշված տեխնիկական բնութագիրը:
Մասնակիցը ցանկանում է պարզաբանել ախտահանիչ նյութի բաղադրության անհամապատասխանության պատճառը հրավերում և արդյոք իրենց ախտահանիչ միջոցը՝ վերը նշված բաղադրությամբ համարվում է համարժեք մեր կողմից նշված ախտահանիչին և արդյո՞ք իրենք կարող են մասնակցել մրցույթին, թե ոչ:

***Պարզաբանում N 1:*** Ի պատասխան կազմակերպության հարցմանը, տեղեկացվել է, որ իրենց նշած ֆրանսիական ընկերության կայքի պաշտոնական փաստաթղթային տվյալների մեջ ախտահանիչ նյութի բաղադրությունը և հրավերով մեր սահմանած բնութագրերը նույնն են և չկա անհամապատասխանություն:
Իսկ առաջարկվող նյութի համարժեքության գնահատման համար առաջարկվել է ներկայացնել նյութի հակավիրուսային ազդեցության փորձաքննության արդյունքները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/15-1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նվարդ Բադալյանին:

***Հեռախոս՝ 055 71 51 00***
***Էլեկտրոնային փոստ՝ oksprocurement@mail.ru***

***ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-17/15-1*** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը